

**5.21. Թատերահանդիսային գործունեությունը 2020 թվականին**

2020թ. ԱՐՄՍՍՍՏ-ի հաշվառման դաշտում ընդգրկված թատերահանդիսային 26 կազմակերպություններից ներկայացումներ կազմակերպել են 23-ը, 3-ը գործունեություն չի ծավալել և չի ունեցել ֆինանսական մուտքեր և ծախսեր: 26 թատերահանդիսային կազմակերպություններից 16-ը դրամատիկական են, 3-ը՝ երաժշտական, 5-ը՝ տիկնիկային, մնացած 2-ը՝ Պատանի հանդիսատեսի թատրոնն է և կրկեսը:

Թատերահանդիսային կազմակերպությունների քանակն ըստ ենթակայության, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2020թ.

*միավոր*

	Կազմակերպությունների քանակը	այդ թվում՝ ըստ ենթակայության		
		Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության	բնակավայրերի	իրավաբանական անձանց
ք.Երևան	17	12	4	1
Արարատ	1	1	-	-
Գեղարքունիք	1	-	1	-
Լոռի	3	1	2	-
Շիրակ	2	1	1	-
Սյունիք	2	-	2	-
Ընդամենը ՀՀ	26	15	10	1

Թատերահանդիսային կազմակերպությունների գործունեության հիմնական ցուցանիշները, 2020թ.

	Ներկայացումների քանակը, <i>միավոր</i>	որից՝		Հանդիսատեսների թվաքանակը, <i>մարդ</i>	Ստացված հասույթը, <i>հազ. դրամ</i>
		նոր	հիմնավերանորոգված		
Ստացիոնար ներկայացումներ	1 069	48	18	194 112	214 157.4
որից՝ հիմնական բեմում	612	48	18	103 713	113 006.6
Քաղաքից դուրս ներկայացումներ	11	-	-	2 231	6 279.5
որից՝ գյուղական բնակավայրերում	-	-	-	-	-
Ընդամենը	1 080	48	18	196 343	220 436.9

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2020թ. ցուցադրվել է 1 080 ներկայացում, որոնց 31.1%-ը՝ տիկնիկային, 14.1%-ը՝ երաժշտական ժանրի:

2020թ. թատրոններ հաճախումների քանակը կազմել է 196.3 հազ., նրանց 15.0%-ը հաճախել է երաժշտական, 23.6%-ը՝ տիկնիկային թատրոն: Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 220.4 մլն. դրամ, որի 23.0%-ը՝ երաժշտական, 18.0%-ը՝ տիկնիկային ներկայացումներից է ստացվել: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 204.1 հազ. դրամ:

Թատերահանդիսային կազմակերպությունների գործունեությունն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2020թ.

	Ներկայացումների քանակը, միավոր	Ներկայացումների քանակն այդպիսիք ունեցող մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.Երևան	822	58.7	158 382	192.7	190 157.0	231.3
Արարատ	50	50.0	6 037	120.7	3 692.2	73.8
Գեղարքունիք	19	19.0	3 193	168.1	1 754.8	92.4
Լոռի	59	19.7	8 615	146.0	5 435.6	92.1
Շիրակ	77	38.5	13 419	174.3	16 290.8	211.6
Սյունիք	53	26.5	6 697	126.4	3 106.5	58.6
Ընդամենը ՀՀ	1 080	41.5	196 343	181.8	220 436.9	204.1

Ֆինանսական միջոցների մուտքն ու օգտագործումը, 2020թ.<sup>1</sup>

	մլն. դրամ
Ֆինանսական միջոցների մուտքեր	Ընդամենը
այդ թվում՝	6 586.6
ՀՀ բյուջեից (պետական, համայնքային)	6 152.9
ծառայություններից	215.8
նվիրատվություններից	121.6
վարձակալությունից	66.4
այլ	11.9
Ֆինանսական ծախսեր	6 741.9
այդ թվում՝	
նյութական ծախսեր	303.1
ոչ նյութական ծառայությունների վճարումներ	2 083.7
գործուղման ծախսեր	4.1
աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	3 537.1
հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր	73.9
այլ	740.0

Ֆինանսական մուտքերն ու ծախսերն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2020թ.

	Ֆինանսական մուտքերը		Ֆինանսական ծախսերը	
	ընդամենը	այդպիսիք ունեցող մեկ կազմակերպության հաշվով	ընդամենը	այդպիսիք ունեցող մեկ կազմակերպության հաշվով
ք.Երևան	5 577.1	398.4	5 744.9	410.4
Արարատ	102.5	102.5	105.7	105.7
Գեղարքունիք	58.7	58.7	61.6	61.6
Լոռի	243.4	81.1	252.9	84.3
Շիրակ	435.5	217.8	428.0	214.0
Սյունիք	151.4	75.7	148.8	74.4
Ընդամենը ՀՀ	6 568.6	252.6	6 741.9	259.3

<sup>1</sup> Ֆինանսական միջոցների ծախսերը գերազանցում են Ֆինանսական միջոցների մուտքերին համաձայն «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի մասին» և օրենքների 7-րդ հոդվածի 22-րդ մասի՝ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհների և սուբսիդիաների նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների, և եթե սուբսիդիաների գծով նախատեսված ծրագրերը ենթակա են հարկման ավելի փոքր գումարի չափով, ապա ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված գումարները հիշյալ ֆինանսավորման տրամադրման նույն տարում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե: